Հավելված N 1
ՀՀ կառավարության 2016 թ.
օգոստոսի 25-ի նիստի N 33
արձանագրային որոշման

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՌՈԳՄԱՆ ՈԼՈՐՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ

ք. Երևան, 2016 թ.

Բովանդակություն

Բաժին 1: Ռազմավարության հիմնական նպատակները 4
Բաժին 2: Ռազմավարության հիմնական ուղղությունները 4
Բաժին 3: Օրենսդրական բարեփոխումներ 4
Բաժին 4: Պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող կապիտալ ծախսային ծրագրերի իրականացում 5
Բաժին 5: Պետական ընթացիկ ֆինանսական աջակցության նպատակներն ու ձևերը.....13
Բաժին 6: Ոռոգման համակարգի ընկերությունների ծախսերի վերլուծություն և կրեդիտորական պարտքերի վերակառուցում 18
Բաժին 7: Ոռոգում ջրառ ընկերությունների վերակազմավորում..... 20
Բաժին 8: ՋՕԸ-երի վերամիավորում և ՋՕՄ-երի ստեղծում 21
Բաժին 9: Պետական աջակցության ինստիտուցիոնալ շրջանակը և պետական կառավարման մարմինների դերակատարումը 22
Բաժին 10: Անցումային դրույթներ..... 23
Բաժին 11: Հիմնական ցուցանիշներ 25
Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման գործողությունների ծրագիր 26

Հապավումների ցանկ

խ. մ.	խորանարդ մետր
կմ	կիլոմետր
կՎտ	կիլովատտ
կՎտ.ժ	կիլովատտ ժամ
հա	հեկտար
հազ.	հազար
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՋՕԸ	ջրօգտագործողների ընկերություն
ՋՕՄ	ջրօգտագործողների ընկերություն միություններ

ԲԱԺԻՆ 1: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

1. Սույն ռազմավարության հիմնական նպատակներն են՝

1) ոռոգման ծառայությունների արդյունավետության բարձրացումը, ծառայությունների մատուցման շարունակականության ապահովումն ու մատչելիության պահպանումը.

2) ոռոգման ջրի համակարգի ընկերությունների (ջրօգտագործողների ընկերություններ և ջրառ ընկերություններ) ֆինանսական կենսունակության և կայունության բարելավումը՝ ամրապնդելով ընթացիկ ծախսածածկման անցնելու նախադրյալներ.

3) ոռոգման համակարգերի և ենթակառուցվածքների պահպանումն ու արդիականացումը.

4) ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության ներդրման արդյունավետության բարձրացումը.

5) ջրօգտագործողների ընկերությունների ինստիտուցիոնալ կարողությունների հետագա հզորացումը:

ԲԱԺԻՆ 2: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Միջնաժամկետ հատվածում ռազմավարության հիմնական նպատակների ապահովմանը միտված գործողություններն ունենալու են հետևյալ ուղղվածությունը՝

1) օրենսդրական բարեփոխումներ՝ միտված ոռոգման ջրի ճկուն, տարբերակված և խրախուսական վճարային համակարգի ներդրմանը, ինչպես նաև ՋՕԸ-երի լիազորությունների ընդլայնում՝ միտված լրացուցիչ եկամուտների ապահովմանը,

2) պետական բյուջեի միջոցների հաշվին ֆինանսավորվող կապիտալ ծախսային ծրագրերի իրականացում՝ ուղղված ոռոգման համակարգերի և ենթակառուցվածքի շահագործման արդյունավետության բարձրացմանը, պահպանմանն ու արդիականացմանը,

3) ֆինանսական միջոցների առավել արդյունավետ և տնտեսվար օգտագործում, ծախսերի կրճատում, ՋՕԸ-երին պետական ընթացիկ ֆինանսական անհրաժեշտ աջակցության ապահովում,

4) ոռոգման համակարգի ընկերությունների (ջրօգտագործողների ընկերություններ և ջրառ ընկերություններ) կրեդիտորական պարտքերի վերակառուցման ծրագրի մշակում և իրականացում,

5) ոռոգում ջրառ ընկերությունների վերակազմավորում մեկ ընկերության կազմում և ՋՕՄ-երի ստեղծում:

ԲԱԺԻՆ 3: ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

3. ՀՀ կառավարությունը մտադիր է առաջիկայում հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով, որոնք նպատակ են հետապնդելու՝

1) Ընդլայնել ՋՕԸ-երի լիազորությունները ոռոգման ջրի մատակարարման ծառայության համար տարբեր վճարների՝ այդ թվում փոփոխական (կախված ջրի ծավալից, հողատարածքի չափից, հասանելիությունից, հողօգտագործման նպատակայնությունից, հողատեսքի և մշակաբույսի համատեղելիությունից, հողատարածքի տեղաբաշխվածությունից, ոչ մշակելի հողատարածքների ընդգրկումից) և հաստատուն (ոռոգելի հողատարածքի հեկտարի հաշվով՝ միայն տվյալ տարում ՋՕԸ-ի հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքած և ծառայություններից օգտվող ջրօգտագործողների նկատմամբ) վճարների սահմանման հարցում,
2) ՋՕԸ-երին հնարավորություն տալ սահմանել ոռոգման ջրի տարբերակված վճարներ կախված ոռոգման ջրի մատակարարման եղանակներից,
3) Ընդլայնել ՋՕԸ-երի լիազորությունները՝ հնարավորություն տալով նրանց ներգրավվել այլ գործունեության մեջ և լրացուցիչ եկամուտներ ստանալ ոռոգման ջրի մատակարարման ծախսերը փակելու նպատակով:

ԲԱԺԻՆ 4: ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ԳԼՈՒԽ 1: ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ ՈՒՂՂՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐ

4. Շարունակելով վերջին մի քանի տարիների պրակտիկան՝ ՀՀ կառավարությունը մտադիր է շարունակել 2017-2021 թթ. ոռոգման համակարգերի պահպանման ու արդիականացման գծով պետական բյուջեի ներքին աղբյուրներից հատկացումների կատարումը: Կապիտալ ծախսերի համապատասխան ծրագրերը քննարկվելու են ինչպես միջնաժամկետ, այնպես էլ տարեկան բյուջետային փաստաթղթերի կազմման ժամանակ:

5. 2017-2021 թթ. պետական բյուջեի ներքին աղբյուրներից ոռոգման համակարգեր և ենթակառուցվածք ուղղվող կապիտալ ծախսերի կողմնորոշիչ չափաքանակների գնահատականներն ըստ տարիների ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

	չ/մ	2017	2018	2019	2020	2021
Պետական բյուջեի ներքին աղբյուրներից կապիտալ ծախսեր	մլն դրամ	1,000.0	1,000.0	1,000.0	1,000.0	1,000

6. Պետական ներդրումային ամենամյա ծրագիրը ըստ հիդրոտեխնիկական կառույցներում իրականացվելիք աշխատանքների առաջնահերթության և դրանք սպասարկող ՋՕԸ-երի՝ մշակում է ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտեն և հաստատվում է ՀՀ կառավարության կողմից:

ԳԼՈՒԽ 2: . ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

7. Օտարերկրյա ներդրումային միջոցներով նախատեսվում են կատարել հետևյալ ծրագրերը (տես Աղյուսակ 1).

Աղյուսակ 1

h/h	Ծրագրի անվանումը	Նկարագրությունը
Համաշխարհային բանկի կողմից իրականացվող <<Ոռոգման համակարգերի բարելավում>> ծրագիր		
1	Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգ	Քաղցրաշենի ինքնահոս ոռոգման համակարգի կառուցմամբ նախատեսվում է ինքնահոս եղանակով ապահովել Արարատի մարզի 12 համայնքների հողատարածքների ոռոգումը՝ համակարգի սպասարկման տարածքում ոռոգվող հողատարածքները 854 հա-ից հասցնելով 1232 հա-ի՝ ոռոգելի դարձնելով ևս 378 հա: Քաղցրաշենի գործող մեխանիկական ոռոգման համակարգը ջուրը ստանում է Արտաշատի ջրանցքից, որը սնվում է Հրազդան գետից և Ազատի ջրամբարից: Պոմպակայանը ջուրը մղում է 180 մ բարձրության վրա: Արարատի մարզում 12 համայնքների հողատարածքները ոռոգելու համար տարեկան ծախսվում է շուրջ 12 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիա: Նոր ծրագրով նախատեսվում է Ազատ գետի հոսքով Ազատի ջրամբարից մոտ 9 կմ վերև կառուցել ջրընդունիչ կառույց և մոտեցնող խողովակաշար, որով ոռոգման համար անհրաժեշտ ջրաքանակը կուղղվի Քաղցրաշենի պոմպակայանի ջրթող ավազան՝ գործող մեխանիկականի փոխարեն ինքնահոս եղանակով ոռոգման ջուր մատակարարելով ջրօգտագործողներին: Ինքնահոս ոռոգման տնտեսական արդյունավետությունը, ի տարբերություն ջրամբարից մեխանիկական եղանակով մղվող ջրի, անհամեմատ բարձր է:
2	Գեղարդալճի ինքնահոս ոռոգման համակարգ	Ծրագիրը կփոխարինի Ազատ գետից և ջրամբարից ջուր մղող պոմպակայաններից 3-ին (Ազատի քառաստճան, Հացավանի և Գեղադիրի) ինքնահոս ջրամատակարարմամբ՝ Գեղարդալճի ջրամբարից: Գլխավոր աշխատանքներն են՝ պատվարի բարձրության ավելացում, ծավալը՝ 2.5 մլն մ3-ից մինչև 3.4 մլն մ3 ավելացնելով և 33 կմ ճնշումային

		խողովակաշարի կառուցում: Մեխանիկականից ինքնահոսի փոխարինման արդյունքում կխնայվի 10.88 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիա, իսկ ինքնահոս ոռոգվող տարածքը կկազմի 1450 հա, որից նոր ոռոգելի հողատարածքը՝ 575 հա:
3	Բաղրամյան-Նոյակերտ ինքնահոս ոռոգման համակարգը	4.66 կմ երկարությամբ, ջուր կստանա Տկհանի ջրանցքից: Ինքնահոս համակարգի կառուցմամբ հնարավորություն կընձեռնվի Նոյակերտ 1, 2, Բաղրամյան 1 պոմկայանները շահագործումից հանել, ոռոգել շուրջ 570 հա հողատարածք: Ներկայումս ոռոգվում է 40 հա:
4	Մեղրու ինքնահոս համակարգ	31.7 կմ երկարությամբ: Մեղրու ինքնահոս համակարգի կառուցման շնորհիվ 16 պոմպակայաններից 12-ը կհանվի շահագործումից:
Եվրասիական զարգացման բանկի «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագիրն (ISMP) ըստ բաղադրիչների		
1	Բաղադրիչ 1. Մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգերով (11.9 մլն դոլար)	Բաղադրիչի շրջանակներում կֆինանսավորվի ոռոգման համակարգերում 8 օբյեկտների կառուցում, ինչի արդյունքում ակնկալվում է տարեկան տնտեսել 7.3 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիա՝ շուրջ 300 մլն դրամ արժեքով, ոռոգելի հողատարածքների աճ՝ շուրջ 1373 հեկտարով: Շահառուների քանակը՝ 21920 մարդ: Արարատի մարզ՝ Ազատ գետից ինքնահոս համակարգ (828.4 հազ դոլար), Արարատի մարզ՝ Արտաշատի ջրանցքի V բաժանարարից ինքնահոս համակարգ (1506.6 հազ դոլար), Արարատի մարզ՝ Նոր Խարբերդ ինքնահոս համակարգ (2329.5 հազ դոլար), Գեղարքունիքի մարզ՝ Ագրիճի ինքնահոս համակարգ (4199.3 հազ դոլար), Վայոց Ձորի մարզ՝ Բարձրունի ինքնահոս համակարգ (319.2 հազ դոլար), Կոտայքի մարզ՝ Նոր Գեղի և Նոր Արտամետ ինքնահոս համակարգ (991.5 հազ դոլար), Կոտայքի մարզ՝ Պտղնի ինքնահոս համակարգ (1458.5 հազ դոլար), ք. Երևան՝ Ծիծեռնակաբերդի ինքնահոս համակարգ (247.9 հազ դոլար):
2	Բաղադրիչ 2. Որոշ մայր ջրանցքների և երկրորդ կարգի ջրանցքների վերականգնում (12.04 մլն դոլար)	Այս բաղադրիչով կվերականգնվեն 4 մայր և 22 երկրորդ կարգի ջրանցքների համապատասխանաբար շուրջ 8.2 կմ և շուրջ 54.1 կմ ծայրահեղ քայքայված, վթարային հատվածները: Ակնկալվում է նաև ոռոգելի հաղատարածքների աճ

		մոտ 2092 հեկտարով: Մայր ջրանցքների վթարային հատվածների վերականգնում. Արտաշատի՝ Արարատի մարզում՝ 1400մ (586.4 հազ դոլար), Արզնի-Շամիրամ՝ Արագածոտնի և Կոտայքի մարզերում՝ 2475մ (920.4 հազ դոլար), Ստորին Հրազդան՝ Արմավիրի մարզում՝ 3500մ (2095.8 հազ դոլար), Կոտայքի՝ Կոտայքի մարզում՝ 800մ (972.3 հազ դոլար), Երկրորդ կարգի ջրանցքների վթարային հատվածների վերականգնում. Արարատի մարզ՝ 11100մ (1319.2 հազ դոլար), Արմավիրի մարզ՝ 23900մ (3791.8 հազ դոլար), Կոտայքի մարզ՝ 10700մ (1132.7 հազ դոլար), Արագածոտնի մարզ՝ 4900մ (862.9 հազ դոլար), Տավուշի մարզ՝ 3500մ (357.1 հազ դոլար):
3	Բաղադրիչ 3. ՋՕԸ-երի ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում (20.3 մլն դոլար)	Այս բաղադրիչով կվերականգնվի 146 ներտնտեսային ոռոգման համակարգեր 99 համայնքնում: Ակնկալվում է տարեկան տնտեսել շուրջ 6.3 մլն կվտ.ժամ էլեկտրաէներգիա՝ շուրջ 265 մլն դրամ արժեքով, ոռոգելի հողատարածքներն ավելացնել՝ 6967 հեկտարով: Շահառուների քանակը՝ 65554 մարդ: Երրորդ կարգի ջրանցքների քայքայված հատվածների վերականգնում. Արարատի մարզ՝ 83950մ, լրացուցիչ հողատարածքների ներգրավում՝ 2236հա, (7661.2 հազ դոլար) Արմավիրի մարզ՝ 82715մ, լրացուցիչ հողատարածքների ներգրավում՝ 2421հա, (5712.2 հազ դոլար) Կոտայքի մարզ՝ 62370մ, լրացուցիչ հողատարածքների ներգրավում՝ 1103 հա, (2752.6 հազ դոլար) Արագածոտնի մարզ՝ 24960մ, լրացուցիչ հողատարածքների ներգրավում՝ 717հա, (2829.3 հազ դոլար) Գեղարքունիքի մարզ՝ 11000մ, լրացուցիչ հողատարածքների ներգրավում՝ 384հա, (862.4 հազ դոլար) Սյունիքի մարզ՝ 12810մ, լրացուցիչ հողատարածքների ներգրավում՝ 106հա (440.6 հազ դոլար):

4	Բաղադրիչ 4. ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ զարգացում (4.4 մլն դոլար)	ՋՕԸ-երի ինստիտուցիոնալ հզորացումը ներառում է միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են ոռոգման վճարների հավաքագրման բարելավմանը, ոռոգման ջրի մատակա¬րար¬ման ծախսերի կրճատմանը, ՋՕԸ-երի կառավարման մարմինների զարգացմանը, այդ թվում՝ ֆեդերացիայի ստեղծմանը, ոռոգման ծառայությունների բարելավմանը, նոր տեխնոլոգիաների խթանմանը, ջրօգտագործողների իրազեկվածության բարձրացմանը:
Ջրամբարաշինության ծրագրեր		
1	Կապսի ջրամբար	1-ին փուլով նախատեսվում է կառուցել ընդհանուր 25 մլն մ3 ծավալով, 55մ պատվարի բարձրությամբ ջրամբար, որը կբարձրացնի Շիրակի և Ախուրյանի Աջափնյա ջրանցքների իշխման տակ գտնվող շուրջ 12325 հա հողատարածքների ջրապահովվածության մակարդակը, ինչպես նաև մեխանիկական ոռոգման եղանակից ինքնահոսի անցնելով տարեկան կխնայվի 1,3 մլն կվտ/ժամ էլեկտրաէներգիա:
2	Վեդու ջրամբար	Վեդու ջրամբարի ընդհանուր ծավալը 29 մլն մ3 է: Կառուցվող պատվարը կունենա 72 մ բարձրություն, 29 մլն մ3 ծավալ: Ջրամբարի կառուցումը հնարավորություն կտա 4 հազ. հա հողատարածքների ոռոգման համար, որից 2.8 հազ.հա մեխանիկակն ոռոման փոխարինում ինքնահոսով:
3	Եղվարդի ջրամբար	Եղվարդի անավարտ ջրամբարը 228 մլն մ3 ընդհանուր ծավալով կունենա 90,0 մլն մ3 ընդհանուր ծավալ, իսկ պատվարների բարձրությունը կլինի 32մ և 14մ: Կապահովի 30.5 հազ հա հողատարածքների ոռոգման և ջրաապահովվածություն:
4	Մաստարայի ջրամբար	Գտնվում է ՀՀ Արմավիրի մարզում՝ Սելավ Մաստարա գետահովտում: Ջրամբարը նախատեսվում է լցնել Սելավ Մաստարա և Ախուրյան գետերի գարնան վարարային հոսքով: Ջրամբարը նախատեսվում է կառուցել 10.2 մլն մ3 ընդհանուր ծավալով, օգտակար ծավալը՝ 8.2 մլն մ3, իսկ պատվարի բարձրությունը՝ H=30մ: Կապահովի 4.4 հազ հա հողատարածքների ոռոգման և ջրաապահովվածություն:

8. Դրամաշնորհների տեսքով ՋՕԸ-երին տրամադրվելիք պետական ֆինանսական աջակցության չափերի գնահատականներում հաշվի է առնվել

Համաշխարհային բանկի կողմից ոռոգման համակարգում ներդրումային ծրագրի ազդեցության գնահատման հետևյալ ենթադրությունները.

1) էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման ազդեցությունը կզգացվի 2017 թվականից սկսած,
2) շահագործման ծախսերի կրճատման ազդեցությունը կզգացվի 2017 թվականից սկսած,
3) ոռոգելի հողատարածքների ընդլայնման ազդեցությունը կզգացվի 2019 թվականից սկսած:

Ոռոգման համակարգում ներդրումային ծրագրերի արդյունքում ակնկալվող տարեկան շահագործման ծախսերի կրճատման գնահատականի.

Աղյուսակ 2

Իրականացվող ծրագրեր	Էլ. էներգիայի տնտեսում		Շահագործման ծախսերի տնտեսում	Ընդամենը տարեկան ծախսերի տնտեսում	Այդ թվում նախատեսում ըստ տարիների				
	ծախս	արժեք			2017	2018	2019	2020	2021
	մլն.կվտ/ժ	մլն.դրամ	մլն.դրամ	մլն.դրամ	մլն.դրամ	մլն.դրամ	մլն.դրամ	մլն.դրամ	մլն.դրամ
Համաշխարհային բանկի կողմից իրականացվող <<Ոռոգման համակարգերի բարելավում>> ծրագիր (ISEP)	**32.8**	**1312**		**1312**	**670**	**910**	**1312**	**1312**	**1312**
1) Մեղրու ինքնահոս համակարգ					80	80	80	80	80
2) Քաղցրաշենի ինքնահոս համակարգ						240	240	240	240
3) Գեղարդալճի ինքնահոս համակարգ							402	402	402
4)Բաղրամյան-Նորակերտ ինքնահոս համակարգ						0	0	0	0
Բաղադրիչ. Հեռացնող ջրանցքների վերանորոգում					590	590	590	590	590
1) Մեղրու ինքնահոս համակարգ					80	80	80	80	80
Եվրասիական զարգացման բանկի «Ոռոգման համակարգերի արդիականացում» ծրագիրն (ISMP)	**14.4**	**576**	**318**	**894**			**200**	**620**	**894**
Բաղադրիչ 1. Ինքնահոս համակարգերի կառուցում									

1)Դոտացիոն ինքնահոս համակարգ Մխչյանի հեռացնող ջրանցքին	1.10	44	3						
2)Արատաշատի ջրանցքի V բաժանարարից ինքնահոս համակարգ	1.10	44	6						
3) Նոր Խարբերդ ինքնահոս համակարգ	0.75	30	16						
4) Արգիճիի ինքնահոս համակարգ	2.50	100	16						
5) Բարձրունի ինքնահոս համակարգ	0.50	20	2						
6) Նոր Գեղի և Նոր Արտամետ ինքնահոս համակարգ	0.50	20	0						
7) Պտղնի ինքնահոս համակարգ	0.40	16	8						
8)Ծիծեռնակաբերդի ինքնահոս համակարգ	0.50	20	1						
Բաղադրիչ 2. Մայր և երկրորդ կարգի ջրանցքների նորոգում	0.71	28	42						
Բաղադրիչ 3. Երրորդ կարգի ջրանցքների վերանորոգում	6.35	254	223						
Ջրամբարաշինության ծրագրեր									
Վեդու ջրամբար	Ջրամբարաշինության իրականացման աշխատանքները ընթացքի մեջ են, կառուցման աշխատանքների ավարտը նախատեսվում է 2022 թվականից հետո								
Կապսի ջրամբար									
Մաստարայի ջրամբար									
Եղվարդի ջրամբար									

ԲԱԺԻՆ 5: ՊԵՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ՁԵՎԵՐԸ

ԳԼՈՒԽ 1: ՊԵՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

9. Ռազմավարությունը նախատեսում է դրամաշնորհների տեսքով 2017-2021թթ. պետական ընթացիկ ֆինանսական աջակցության աստիճանական նվազեցում: Ներկայիս ֆինանսական աջակցությունը թույլ է տալիս ՋՕԸ-երին ոռոգման ջրի մատակարարման ծառայությունը իրենց անդամներին իրականացնել ինքնածախսածածկման սակագներից ցածր սակագնով: Հետևաբար պետական ընթացիկ ֆինանսական աջակցության նպատակներն են՝

1) ոռոգման ջրի մատչելիության ապահովում՝ կրճատելով ոռոգելի հողատարածքների նվազման հավանական ռիսկերն ու նպաստելով փաստացի ոռոգվող հողատարածքների ավելացմանը.
2) ՋՕԸ-երի ֆինանսական վիճակի բարելավումը (ներառյալ՝ նախկինում կուտակված կրեդիտորական պարտավորությունների կրճատմանը ուղղված գործիքների կիրառում)՝ ամրապնդելով ընթացիկ ծախսածածկման հնարավորինս բարձր մակարդակի ապահովման նախադրյալները:

ԳԼՈՒԽ 2: ՋՕԸ-ԵՐԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

10. ՀՀ կառավարությունը մտադիր է միջնաժամկետ հատվածում շարունակել ջրօգտագործողների ընկերություններին պետական ընթացիկ ֆինանսական աջակցության դրամաշնորհների տեսքով տրամադրման պրակտիկան, որը ներդրվել և կիրառվել է սկսած 2007 թվականից[1]:

11. Ընթացիկ բյուջետային դրամաշնորհների տրամադրման սկզբունքները

1) Դրամաշնորհները ՋՕԸ-երին տրամադրվելու են ոռոգման ոլորտի պետական կառավարման լիազորված մարմնի (ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտե) և ՋՕԸ-երի միջև կնքվելիք դրամաշնորհային պայմանագրերի համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 30-ի N1291-Ն որոշմամբ սահմանած դրամաշնորհային պայմանագրերի 5 տարվա ժամկետը: 2010-2016 թվականների, գործընթացի վերլուծության արդյունքում, կառավարման բնագավառում ճկունություն ապահովելու նպատակով 5 տարի ժամկետը կրճատել մինչև 3 տարի:
2) Դրամաշնորհային պայմանագրերը կնքվելու են երեք տարվա ժամկետով, դրանք յուրաքանչյուր տարի վերանայելու պայմանով և անհրաժեշտության դեպքում դադարեցնելու կամ ևս երկու տարով երկարաձգելու

[1] ՀՀ կառավարության «Ջրօգտագործողների ընկերությունների պետական ֆինանսական աջակցության բարեփոխումների հիմնադրույթները և մատակարարված ոռոգման ջրի կորուստների նորմաները հաստատելու մասին» 2007 թ. փետրվարի 8-ի թիվ 188-Ն որոշում:

հնարավորությամբ, որոնցով ամրագրվելու են պայմանագրային երեք տարիների ընթացքում ՋՕԸ-երին տրամադրվելիք դրամաշնորհների չափերը, ինչպես նաև հաջորդ երկու տարիների դրամաշնորհների կողմնորոշիչ մակարդակներն՝ ըստ տարիների: Ընդ որում դրամաշնորհային պայմանագրի երկարաձգման հնարավորությունից կկարողանան օգտվել այն ՋՕԸ-երը, որոնք դրամաշնորհային պայմանագրի գործողության ընթացքում կապահովեն պայմանագրով նախատեսված նախապայմանների կատարումը:

3) Ընթացիկ դրամաշնորհային աջակցության տրամադրման հիմքում դրվում են հետևյալ *սկզբունքները*՝

ա. օբյեկտիվությունը,

բ. արդյունավետությունը,

գ. կանխատեսելիությունն ու թափանցիկությունը,

դ. արդյունքներ ապահովելու ուղղվածությունը:

4) Ընթացիկ դրամաշնորհները մի կողմից՝ կնպաստեն ՋՕԸ-երի ընթացիկ ֆինանսական ճեղքվածքի ծածկման խնդիրների լուծմանը, մյուս կողմից՝ կօգնեն ապահովելու համակարգի պատշաճ շահագործում և պահպանում:

5) ՋՕԸ-երի ֆինանսական կենսունակության բարելավման հարցում ՋՕԸ-երի կառավարման մարմինների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով ՋՕԸ-երի հետ կնքվող դրամաշնորհային պայմանագրերում կամրագրվեն համապատասխան մեխանիզմներ, որոնք՝

ա. հնարավորություն կտան, որ եթե ՋՕԸ-ի առավել արդյունավետ կառավարման արդյունքում ՋՕԸ-ն նախատեսվածից ավելի բարձր ծախսածածկման աստիճանի հասնի (ինչպես դրամաշնորհի չափի որոշման ժամանակ նախատեսվածից ավելի շատ եկամուտներ ապահովելու (հավաքագրման աստիճանի բարձրացման և ոռոգման ջրի ավելի բարձր վճարների սահմանման հետևանքով), այնպես էլ ծախսերի արդյունավետության բարձրացման շնորհիվ), ՋՕԸ-ն կշարունակի ստանալ դրամաշնորհները, ինչն ուղղված կլինի ջրի ավելի արդյունավետ կառավարմանը (կորուստների կրճատում, համակարգի ընդլայնում, մոնիտորինգի և ինքնավերահսկման մեխանիզմների ներդնում)՝ ըստ դրամաշնորհային պայմանագրով սահմանված սահմանաչափերի,

բ. առավել արդյունավետ կառավարման արդյունքում ՋՕԸ-երի մոտ լրացուցիչ ֆինանսական միջոցների առաջացման դեպքում ՋՕԸ-երին հնարավորություն կտան այն մասնակիորեն ուղղել համակարգի զարգացմանը,

գ. ՋՕԸ-երի դրամաշնորհային պայմանագրերով սահմանված նախապայմանները կամ դրանցից որևէ մեկը առաջին տարում չկատարելու դեպքում՝ դրա պատճառները և հետագայում վերացնելու հանգամանքները քննարկվում է ՋՕԸ-երի կանոնակարգող խորհրդում, որում ընդունվում է՝ այդ հանգամանքների հաջորդ տարում վերացնելու վերաբերյալ միջոցառումների ծրագիր, ինչի իրականացումը ՋՕԸ-երի կողմից կկրի պարտադիր բնույթ: Երկու տարի շարունակ սահմանված նախապայմանները չկատարելը կհանգեցնեն ՋՕԸ-ի գործադիր մարմնի կազմի փոփոխության:

12. Ընթացիկ դրամաշնորհների տրամադրման նախապայմանները

1) ՋՕԸ-երին ընթացիկ դրամաշնորհները տրամադրվելու են ՋՕԸ-երի կողմից որոշակի պայմանների բավարարման պարագայում: Այդ պայմանների խախտման դեպքում կա՛մ ՋՕԸ-ն դադարում է հավակնել ընթացիկ դրամաշնորհների տեսքով աջակցությանը, կա՛մ դրամաշնորհների չափերը ճշգրտվում են սահմանված կարգով՝ հաշվի առնելով ներքոհիշյալ պայմանները, որոնց չափերը ընթացիկ տարվա համար սահմանվում են ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի առաջարկությամբ ՀՀ կառավարության կողմից, ելնելով ոռոգման նախորդ ժամանակահատվածի համար ՋՕԸ-երի ներքոհիշյալ ցուցանիշների դինամիկայից:

2) Դրամաշնորհների տրամադրման հիմնական պայմաններ են հանդիսանալու՝

ա. Ոռոգման ջրի կառավարման բարելավման և համակարգի պահպանման ուղղությամբ իրականացված միջոցառումները և դրանց արդյունավետությունը,

բ. Կրեդիտորական պարտավորությունների առավելագույն սահմանը,

գ. Հաշվետվողականությունը՝ ինչը ներառում, բայց չի սահմանափակվում ստացված ֆինանսական աջակցության օգտագործման նպատակայնության և արդյունավետության վերաբերյալ տեղեկատվությամբ:

3) Դրամաշնորհային պայմանագրերով ՋՕԸ-երը պարտավորվելու են իրականացնել ոռոգման ջրի կառավարման բարելավման և համակարգի պահպանման ուղղությամբ իրականացված միջոցառումներ, որոնք նպատակաուղղված են ոռոգման ջրի մատակարարման առավել հուսալի, անաչառ և հնարավորինս նվազ ծախսային էֆեկտիվության ապահովմանը:

4) Դրամաշնորհային պայմանագրով ջրօգտագործողների ընկերությունները պարտավորվելու են սահմանափակել տվյալ տարվա ընթացքում կրեդիտորական պարտքերի կուտակումը, որոնց մակարդակը սկսած 2019 թվականից չի կարող գերազանցել ՋՕԸ-ի տվյալ տարվա հաշվեգրված ծախսերի 8 տոկոս սահմանը[2], որը կարող է փոփոխվել գործողությունների ծրագրով նախատեսված բյուջեների կազմման մեթոդաբանությամբ հաստատված բյուջեների համաձայն:

5) Դրամաշնորհային պայմանագրով ջրօգտագործողների ընկերությունները պարտավորվելու են դրամաշնորհային պայմանագրով սահմանված ժամկետներում ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին ներկայացնել պայմանագրով նախատեսված համապատասխան հաշվետվությունները:

[2] Այս ցուցանիշի համար հիմք է հանդիսացել Համաշխարհային բանկի և Խորհրդատուի միջև 2014 թվականի սեպտեմբերի 26-ին ստորագրված թիվ 7172862 պայմանագրի շրջանակներում իրականացված <<ՋՕԸ-երի և ոռոգում ջրառ ընկերությունների գործունեության և ՋՕԸ-երի պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարության կատարման արդյունքների վերլուծության>> կրեդիտորական պարտավորությունների առավելագույն սահմանի վերլուծությունը, որը դիտարկվում է որպես անցումային չափորոշիչ՝ հետագայում նվազեցման միտումով մինչև 0-ական մակարդակ:

ԳԼՈՒԽ 3: ՊԵՏԱԿԱՆ ԸՆԹԱՑԻԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՎՈՂ ՉԱՓԵՐԸ 2017 – 2021 ԹԹ. ԵՎ ԴՐԱՆՑ ՃՇԳՐՏՈՒՄԸ

13. Դրամաշնորհների տեսքով ՋՕԸ-երին տրամադրվելիք պետական ընթացիկ ֆինանսական աջակցության չափերը գնահատվելու են հաշվի առնելով.

1) Ծրագրային ժամանակահատվածում 1 հեկտարի հաշվով հաստատագրված վճարների (միայն տվյալ տարում ՋՕԸ-ի հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքած և ծառայություններից օգտվող ջրօգտագործողների նկատմամբ) և ոռոգման ջրի դիմաց վճարների հաշվարկային մակարդակների աստիճանական աճի քաղաքականության շարունակման մտադրությունն ու իրականացման ապահովումը.

2) Օրենսդրորեն սահմանված մեկ հեկտարի հաշվով ըստ մշակաբույսերի ՋՕԸ-ի կողմից ջրման նորմայի և ռեժիմի պահպանման սկզբունքի կիրառում:

ԳԼՈՒԽ 4: ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

14. Ոռոգման ջրի վճարների սահմանման մոտեցումները հիմնված են լինելու հետևյալ երկու հիմնարար սկզբունքների՝ ծախսածածկում և մատչելիություն հավասարակշռման վրա.

1) **Ծախսածածկման սկզբունք.** Այս սկզբունքը ենթադրում է, որ ոռոգման ջրի մատակարարման համար կատարված ծախսերը, առնվազն ընթացիկ ծախսերի մասով, պետք է փոխհատուցվեն ոռոգման ջրի վճարների միջոցով:

2) **Մատչելիության սկզբունք.** Սույն ռազմավարության շրջանակներում մատչելիության սկզբունքը սահմանվում է ելնելով ՀՀ կառավարության կողմից գյուղատնտեսության բնագավառում վարվող քաղաքականությունից, ինչով պայմանավորված ենթադրվում է, որ ոռոգման ջրի վճարները պետք է մատչելի լինեն ոռոգման ջուր սպառողների համար:

15. Միաժամանակ նախատեսվում է 2019 թվականից սկսած ներդնել ոռոգման ջրի վճար՝ ըստ ջրի ծավալի և հաստատագրված վճար՝ ըստ ոռոգելի հողատարածքի չափերի: Մեկ հեկտարի հաշվով հաստատուն վճարները կիրառվում են միայն տվյալ տարում ՋՕԸ-ի հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքած և ծառայություններից օգտվող ջրօգտագործողների նկատմամբ: Միաժամանակ կառավարման մարմինը միջազգային դոնոր կազմակերպությունների աջակցությամբ պետք է իրականացնի ուսումնասիրություններ՝ ոռոգման ջրի ճկուն, տարբերակված և խրախուսական վճարային համակարգի կիրառելիության վերաբերյալ:

16. ***Ոռոգման ջրի վճար (կախված ջրի ծավալից).*** Ներկայումս ՋՕԸ-երը գտնվում են կայացման փուլում և չեն ապահովում ինքնածախսածածկման սկզբունքը: Ոռոգման ջրի միջին ինքնարժեքը կազմում է 21 դրամ/մ^3, սակայն սակագին է սահմանվել 11 դրամ/մ^3:

17. ՀՀ կառավարությունը ՋՕԸ-երին դրամաշնորհների տեսքով ընթացիկ ֆինանսական աջակցություն տրամադրելիս 2019-2021 թթ. շարունակելու է առաջնորդվել ոռոգման ջրի ծավալի նկատմամբ կիրառվող վճարների հաշվարկային մակարդակների

ավելացման քաղաքականությամբ՝ դրամաշնորհների հաշվարկների հիմքում ենթադրելով ոռոգման ջրի վճարների հետևյալ նվազագույն մակարդակները.

	2019	2020	2021
Ոռոգման ջրի վճար (նվազագույն), դրամ/խ.մ.	11.5	12.0	12.5
Հաստատագրված վճար դրամ/հա (միայն տվյալ տարում ՋՕԸ-ի հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքած և ծառայություններից օգտվող ջրօգտագործողների նկատմամբ)	Չափը կկանոնակարգվի օրենսդրությամբ սահմանված կարգով		

18. Թեև դրամաշնորհների հիմքում դրվել է ոռոգման ջրի դիմաց վճարների հաշվարկային մակարդակների վերոհիշյալ սցենարը, այդուհանդերձ, ՋՕԸ-երը չեն սահմանափակվելու օրենսդրորեն իրենց վերապահված իրավունքների սահմաններում սահմանել վճարների ավելի բարձր մակարդակներ՝ մնացած հավասար այլ պայմաններում ստանալով դրամաշնորհային պայմանագրերով ամրագրված դրամաշնորհների մեծություններն ամբողջությամբ:

19. Ստորև բերվող աղյուսակում ներկայացվում են 2017-2021 թթ. դրամաշնորհների տեսքով ՋՕԸ-երին տրամադրվելիք պետական ֆինանսական աջակցության չափերի գնահատականները. հիմք ընդունելով ոռոգման ջրի վճարը կախված ջրի ծավալից (հաստատագրված վճարը հաշվի չի առնված):

	չ/մ	2017	2018	2019	2020	2021
Ընթացիկ դրամաշնորհների տեսքով ՋՕԸ-երին տրամադրվող պետական ֆինանսական աջակցություն	մլն դրամ	5207.5	4660.8	3763.4	2976.3	2225.5

ԳԼՈՒԽ 5: ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՃՇԳՐՏՈՒՄԸ

20. ՋՕԸ-երի հետ կնքվելիք ընթացիկ դրամաշնորհային պայմանագրերով ամրագրվող դրամաշնորհների չափերը ենթակա են ճշգրտման՝ հետևյալ իրավիճակներում.

1) Հանրապետությունում գնաճի միջին տարեկան 10 տոկոս մակարդակը գերազանցելու պարագայում՝ պայմանագրային ժամանակահատվածում մինչև տվյալ տարին գնաճի միջին տարեկան ցուցանիշի 10 տոկոսը գերազանցող մասերի գծով բազային տարվա նկատմամբ հաշվարկված գների ինդեքսի հավելաճի (տոկոս) և պայմանագրով ամրագրված դրամաշնորհի գումարի արտադրյալի չափով.

2) ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի սակագների փոփոխության դեպքում՝ ջրօգտագործողների ընկերության կողմից նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում էլեկտրաէներգիայի փաստացի սպառման և ՀՀ հանրային ծառայությունները

կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանվող էլեկտրաէներգիայի սակագների հավելաճի արտադրյալի չափով, հաշվի առնելով նաև սակագնի փոփոխման պահից մինչև տվյալ տարվա ավարտը առաջացող ծախսերը:

3) Պայմանագրային ժամանակահատվածում որոշակի տարվա (եթե տարին չորային կամ ջրառատ է) կտրվածքով փաստացի ոռոգելի հողատարածքների՝ պայմանագրով ամրագրված ցուցանիշից ավելի ցածր ցուցանիշ արձանագրելու պարագայում հաջորդ տարվա համար նախատեսված դրամաշնորհի չափը ճշգրտվելու է՝ հավասար լինելով փաստացի և պայմանագրային ոռոգելի հողատարածքների հարաբերակցության և այդ տարվա համար պայմանագրով նախատեսված դրամաշնորհի չափի արտադրյալին: Միևնույն ժամանակ, ՋՕԸ-երին առաջարկվելու է այս գործոնի ազդեցությամբ առաջացող լրացուցիչ հավանական ֆինանսական ճեղքվածքը ֆինանսավորելու նպատակով ձեռնարկել քայլեր՝ մասնավորապես, կատարել ընկերության կողմից ոռոգման ջրի դիմաց և հաստատագրված վճարների ընդունված քաղաքականության վերանայում կամ հավաքագրման աստիճանի բարելավում:

ԲԱԺԻՆ 6: ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

ԳԼՈՒԽ 1: ՋՕԸ-ԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

21. Կանխատեսումների և պլանավորման համար բազային տարի է ընդունվել 2015 թվականը՝ հիմք ընդունելով 2015 թվականին կատարված ՋՕԸ-երի փաստացի ծախսերը: Էլեկտրաէներգիայի ծախսը կանխատեսվել է՝ ենթադրելով, որ էլեկտրաէներգիայի տեսակարար ծախսի ցուցանիշները և էլեկտրաէներգիայի սակագները չեն փոփոխվի: Միաժամանակ կանխատեսումներում հաշվի են առնվել ոռոգման գործընթացը հնարավորինս գիշերային ժամերին իրականացնելու հանգամանքը, ինչը կբերի գոլորշիացման կրճատման հետևանքով հոսակորուստների նվազեցման, իսկ մեխանիկական եղանակով ջրամատակարարման ժամանակ՝ նաև ծախսված էլեկտրաէներգիայի դիմաց գիշերային ավելի ցածր սակագնով վճարումների հնարավորության:

22. ՋՕԸ-երի ընթացիկ ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի ծախսը (շուրջ 40%) և աշխատավարձը և դրան հավասարեցված այլ վճարումները (շուրջ 26%): Մնացած ծախսային բաղադրիչները կազմում են գարնան նախապատրաստական աշխատանքները և հիմնական միջոցների վրա կատարվող ընթացիկ ծախսերը (շուրջ 14%), ջրառի ծախսերը (11%), տրանսպորտային ծախսերը (շուրջ 4%), տնտեսական, ներկայացուցչական, վարձակալության և այլ ծախսերը (շուրջ 3%):

23. Ռազմավարության հիմնական ուղղությունների իրականացմամբ պայմանավորված ոռոգման համակարգի ընկերություններում ծախսային հոդվածների՝ նախորդ տարվա համեմատությամբ 5 %-ով կրճատման դեպքում կունենանք հետևյալ պատկերը.

h/h	Ծախսեր	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը	10419.1	9898.1	9403.2	8933.1	8486.4
1.	Էլեկտրաէներգիայի ծախսեր	4217.4	4006.6	3806.2	3615.9	3435.1
2.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	2776.2	2637.4	2505.5	2380.2	2261.2
3.	Գարնան նախապատրաստական աշխատանքներ և հիմնական միջոցների վրա կատարվող ընթացիկ ծախսեր	1438.5	1366.5	1298.2	1233.3	1171.6
4.	Ջրառի ծախսեր	1192.6	1133.0	1076.3	1022.5	971.4
5.	Տրանսպորտային ծախսեր և վառելիք	417.7	396.8	377.0	358.1	340.2
6.	Տնտեսական, ներկայացուցչական. վարձակալական և այլ ծախսեր	376.7	357.9	340.0	323.0	306.8
7.	Պետական ընթացիկ ֆինանսական աջակցության չափերը	5207.5	4660.8	3763.4	2976.3	2225.5

ԳԼՈՒԽ 2: ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

24. Ոռոգման համակարգի ֆինանսական կենսունակության սպառնացող հիմնական խնդիրներից մեկը շարունակում է մնալ ոլորտի կրեդիտորական պարտքերի խնդիրը:

25. 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՋՕԸ-երի կողմից կուտակած կրեդիտորական պարտքերի ընդհանուր գումարը կազմել է 3747.4 մլն. դրամ, իսկ ոռոգում ջրառ ընկերությունների կրեդիտորական պարտքերի ընդհանուր գումարը կազմել է 2271.8 մլն. դրամ: 2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՋՕԸ-երի կրեդիտորական պարտքերը ոռոգում ջրառ ընկերություններին կազմել են մոտ 1338.5 մլն. դրամ, այսինքն մեծ են եղել ոռոգում ջրառ ընկերությունների կրեդիտորական պարտքերի չափից: Դա նշանակում է, որ ՋՕԸ-երի կրեդիտորական պարտքերի մարման խնդրի լուծման դեպքում մեծամասամբ կկարգավորվեն նաև ոռոգում ջրառ համակարգի կրեդիտորական պարտքերի հարցերը:

26. Հաշվի առնելով նշվածը՝ ՀՀ կառավարությունը մտադիր է ՋՕԸ-երի և ոռոգում ջրառ ընկերությունների կրեդիտորական պարտքերի վերակառուցման խնդիրները դիտարկել մեկ միասնական ծրագրի շրջանակներում:

27. Ոռոգման համակարգի ընկերությունների կրեդիտորական պարտքերի վերակառուցման ծրագիրը կմշակի և կիրականացնի սույն ռազմավարության Միջոցառումների ծրագրում, ինչի շրջանակներում հաշվի առնելով կրեդիտորական պարտքերի առանձնահատկությունները:

ԲԱԺԻՆ 7: ՈՌՈԳՈՒՄ ՋՐԱՌ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐՈՒՄ

28. ՀՀ Կառավարությունը սույն ռազմավարության շրջանակներում նախատեսում է 2018 թվականի հունվարի 1-ից «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ները վերակազմավորել մեկ ոռոգում ջրառ ընկերության կազմում:

29. Ոռոգում ջրառ ընկերությունների ծախսերի կանխատեսումները կատարվել են հետևյալ ենթադրությունների հիման վրա՝

1) Կանխատեսումների համար բազային տարի է ընդունվել 2015 թվականը՝ հիմք ընդունելով «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ների եկամուտների և ծախսերի նախահաշիվների ցուցանիշները:

2) Էլեկտրաէներգիայի ծախսը կանխատեսվել է ենթադրելով, որ էլէկտրաէներգիայի տեսակարար ծախսի ցուցանիշները և էլեկտրաէներգիայի սակագները չեն փոխվի:

30. «Ախուրյան-Արաքս-ջրառ» և «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ-ների ընթացիկ ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի ծախսը՝ շուրջ 52%, աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ՝ շուրջ 32%, մնացած ծախսային բաղադրիչները կազմում են՝ ընթացիկ նորոգման ծախսեր՝ շուրջ 3%, ջրառի ծախսեր 1%, տրանսպորտային ծախսեր՝ շուրջ 3%, տնտեսական, ներկայացուցչական. վարձակալության և այլ ծախսեր՝ շուրջ 9%:

31. Ոռոգում ջրառ ընկերության միավորման ռազմավարության հիմքում դրվել է ծախսերի կրճատման սկզբունքը՝ յուրաքանչյուր տարի, ըստ ծախսային հոդվածների նախորդ տարվա համեմատությամբ 10 %-ի կրճատում, որը ներկայացվում է ստորև.

Հ/Հ	Ծախսեր	2017	2018	2019	2020	2021
	Ընդամենը	3157.4	2841.6	2557.5	2301.7	2071.6
1.	Էլեկտրաէներգիայի ծախսեր*	1643.6	1479.2	1331.3	1198.2	1078.4
	<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ	*5.6*				
	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	*1638.2*				
2.	Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարումներ	1015.7	914.1	822.7	740.4	666.4
	<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ	*157.0*				
	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	*858.7*				
3.	Ընթացիկ նորոգման ծախսեր	103.7	93.3	84.0	75.6	68.0
	<<Ախուրյան-Արաքս-ջրառ>>	*15.0*				

	ՓԲԸ					
	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	*88.7*				
4.	Ջրառի ծախսեր	31.8	28.6	25.8	23.2	20.9
	<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ	*0.0*				
	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	*31.8*				
5.	Տրանսպորտային ծախսեր և վառելիք	95.2	85.6	77.1	69.4	62.4
	<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ	*21.8*				
	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	*73.3*				
6.	Տնտեսական, ներկայացուցչական. վարձակալական և այլ ծախսեր	267.4	240.7	216.6	195.0	175.5
	<<Ախուրյան-Արաքս-ջրառ>> ՓԲԸ	*81.2*				
	<<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ	*186.2*				

*ծախսերի նվազեցումը պայմանավորված է ջրառ ընկերություններից դրանց փոխանցումը ՋՕՄ-երին:

32. Ոռոգում ջրառ ընկերությունների վերակազմավորման նպատակն է բարձրացնել վերջիններիս ծախսերի կրճատման, ինչպես նաև ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը:

33. <<Ախուրյան-Արաքս-ջրառ>> և <<Սևան-Հրազդանյան-ջրառ>> ՓԲԸ-ները վերակազմավորման գործընթացը ավարտին կհասցվի 2017 թվականի ընթացքում և արդեն 2018 թվականի ոռոգման սեզոնից սկսած կգործի ոռոգում ջրառ միավորված ընկերությունը:

34. Ոռոգում ջրառ միավորված ընկերության համար կսահմանվեն լրիվ ինքնածախսածածկող սակագներ: Սկսած 2019 թվականից, ոռոգում ջրառ ընկերության պարտքերի վերակառուցման դեպքում, կդադարեցվի ոռոգում ջրառ համակարգի պետության կողմից սուբսիդավորումը:

ԲԱԺԻՆ 8: ՋՕԸ-ԵՐԻ ՎԵՐԱՄԻԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՋՕՄ-ԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

35. <<Ջրօգատգործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին>> ՀՀ օրենքը թույլ է տալիս ՋՕԸ-երին միավորվել միությունների մեջ և վերջիններիս փոխանցել համակարգերի կառավարման, շահագործման և պահպանման որոշակի գործառույթներ: Միությունների կազմավորումը թույլ կտա ՋՕԸ-երին ստանձնել ընդհանուր նշանակության համակարգերի կառավարումը, որոնք ներկայումս շահագործվում են ջրառ ընկերությունների կողմից:

36. Միությանը վերապահվող գործառույթներից են՝

1) մի քանի ՋՕԸ-եր սնող ջրաղբյուրների, ջրամբարների, մայր ջրանցքների և պոմպակայանների շահագործումն ու պահպանությունը,
2) շահագործման ծանր և թանկարժեք մեխանիզմների համատեղ ձեռքբերումը և օգտագործումը,
3) համակարգերի կենտրոնացված ուժերով պահպանումը և վթարների հետևանքների համատեղ վերացումը,
4) ՋՕԸ-երի անձնակազմի որոշակի հաստիքների համատեղումը,
5) ՋՕԸ-երի ջրամատակարարման հեռանկարային զարգացման ծրագրերի մշակումը և այլն:

37. Ջրօգտագործողների ընկերությունների գործունեության կայունացման բնագավառում ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է ստեղծել ջրօգտագործողների ընկերությունների միություններ (ՋՕԸՄ)՝ հանրապետության ցածրադիր և նախալեռնային գոտիներում՝ ըստ այդ տարածքների ՋՕԸ-երը սնող մայր ջրանցքների, իսկ լեռնային գոտիներում՝ ըստ մարզերի վարչական տարածքների:

ԲԱԺԻՆ 9: ՊԵՏԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄԸ

38. Առաջնորդվելով սույն ռազմավարությամբ՝ ՀՀ կառավարությունը առանձին որոշմամբ կանոնակարգելու է 2017-2021 թվականներին ՋՕԸ-երին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացը:

39. ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն բյուջետային գործընթացի շրջանակներում սույն ռազմավարությամբ նախատեսված ընթացիկ դրամաշնորհների ծրագրերը ներառում է միջնաժամկետ ծախսերի ծրագրերի և տարեկան բյուջեների հայտերում՝ սահմանված ընթացակարգերին համապատասխան:

40. ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին իրավունք է վերապահվելու բյուջետային տարվա ընթացքում իրականացնել պետական բյուջեով հաստատված ընթացիկ դրամաշնորհների ընդհանուր չափաքանակի 5 տոկոսի սահմաններում վերաբաշխումներ՝ ՋՕԸ-երի միջև:

41. Պետական ֆինանսական աջակցության ծրագրերի ընթացիկ մոնիտորինգի գործառույթը վերապահվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեին:

42. Պետական ֆինանսական աջակցության թափանցիկությունն ապահովելու նպատակով ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի էլեկտրոնային կայքում հրապարակվելու են համապատասխան փաստաթղթերն ու տեղեկատվությունը, ներառյալ՝ ժամանակացույցեր, հիմնական դրույթներ, դրամաշնորհային պայմանագրերի օրինակելի ձևեր, ըստ ՋՕԸ-երի պետական ֆինանսական աջակցության սահմանաքանակներ և այլն:

ԲԱԺԻՆ 10: ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

ԳԼՈՒԽ 1: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐ

43. Ռազմավարության շահառուներ են հանդիսանում՝

1) ՀՀ կառավարությունը,
2) ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն,
3) Ոռոգում ջրառ իրականացնող ընկերությունները,
4) Ջրօգտագործողների ընկերությունները, հողօգտագործողները, ֆերմերային տնտեսությունները,
5) Բնագավառի զարգացմանը ներգրավված միջազգային դոնոր երկրները և կազմակերպությունները:

44. Ռազմավարության մշակման ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից կազմակերպվել և իրականացվել են քննարկումներ վերը նշված բոլոր շահառուների մասնակցությամբ, որոնց արդյունքները ներառվել են սույն փաստաթղթում:

ԳԼՈՒԽ 2: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՄԲ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ, ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԵՎ ԴՐԱՆՑ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

45. Ռազմավարությամբ առաջարկվող գործողությունների իրականացման ընդհանուր կառավարումը և մոնիթորինգը կապահովի ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեն, իսկ ռազմավարության մաս հանդիսացող առանձին ծրագրերի ղեկավարումն ու մոնիթորինգը կիրականացվեն ըստ պատկանելիության:

46. Մոնիթորինգային հաշվետվությունների հիման վրա ՀՀ գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի կողմից կիրականացվեն միջանկյալ և վերջնական գնահատումներ և կառաջարկվեն անհրաժեշտ փոփոխությունների կատարման շրջանակները: Մոնիթորինգը կիրականացվի լիազոր մարմնի համապատասխան ստորաբաժանման կողմից՝ պարբերաբար և առանձնակի դեպքերում ըստ անհրաժեշտության, իսկ գնահատման համար կկիրառվեն իրավական, տեխնիկական և կազմակերպչական մոնիթորինգային ցուցիչներ:

ԳԼՈՒԽ 3: ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ

47. Ռազմավարության նպատակների իրականացման ռիսկերը պայմանավորված են.

1) Ոչ բարենպաստ, սակավաջուր կամ ջրառատ եղանակային պայմաններով,
2) Ջրօգտագործողների վճարունակության անկումով,
3) Տարերային աղետներով,

4) Ջրամատակարարման տեղային համակարգերի բացակայությամբ կամ ոչ լիարժեքությամբ,
5) Դրամային կտրուկ սղաճից,
6) Էներգառեսուրսների և ոռոգման բնագավառին հարակից ծառայությունների թանկացումից,
7) Պետական բյուջեի և դոնոր երկրների ու կազմակերպությունների կողմից ոլորտի համար նախատեսված աջակցության կրճատումից:

ԲԱԺԻՆ 11: ՀԻՄՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ռազմավարության հիմնական տեխնիկա-ֆինանսական ցուցանիշների շրջանակ[3]

Ցուցանիշներ	2017	2018	2019	2020	2021
Հիմնական տեխնիկական ցուցանիշներ					
Ոռոգելի հողատարածք, հազ. հա	132.6	133.3	136.3	136.9	137.6
ՋՕԸ-երի ջրառ, մլն.խ.մ.	935.9	940.6	963.4	969.2	972.3
Ջրտուքը դաշտում, մլն.խ.մ.	527.6	530.2	543.1	546.7	548.6
Ոռոգման ջրի կորուստներ (ՋՕԸ-եր), %	43.60%	43.60%	42.60%	41.60%	40.60%
Ոռոգման ջրի կորուստներ (ոռոգում ջրառ ընկերություն(ներ)), %	(25.0%/ 32.5%)*	(25.0%/ 32.5%)*	28.40%	27.40%	26.40%
Էլեկտրաէներգիայի սպառում, մլն կՎտ.ժ	152.2	144.6	137.4	130.5	124.0
ՋՕԸ-եր	109.3	103.8	98.6	93.7	89.0
Ոռոգում ջրառ ընկերություն (ներ)	42.9	40.8	38.8	36.8	35.0
Ոռոգման ջրի վճարներ/ սակագներ, հավաքագրում և ընթացիկ ծախսածածկում					
ՋՕԸ-երի կողմից սահմանվող ոռոգման ջրի վճարներ					
ոռոգման ջրի վճար (ջրի ծավալից կախված), դրամ/խ.մ	11.0	11.0	11.5	12.0	12.5
Ոռոգում ջրառ ընկերություն (ներ)					
մեխանիկական, դրամ/խ.մ	11.52	11.52	12.02	12.52	13.02
ինքնահոս, դրամ/խ.մ.	(0.71/ 1.01)*	(0.71/ 1.01)*	1.06	1.11	1.16
ՋՕԸ-երում ոռոգման ջրի վճարների հավաքագրման մակարդակ, %	89.80%	89.80%	90.30%	90.80%	91.30%
Եկամուտներ, ծախսեր և պետական ֆինանսական աջակցություն					
ՋՕԸ-երի եկամուտները (հավաքագրում), մլն. դրամ	5211.6	5237.3	5639.8	5956.8	6260.9
ՋՕԸ-երի ծախսերը, մլն. դրամ	10419.1	9898.1	9403.2	8933.1	8486.4
Պետական ընթացիկ ֆինանսական աջակցության (դրամաշնորհների) չափերի գնահատական, մլն դրամ**	5207.5	4660.8	3763.4	2976.3	2225.5
ՋՕԸ-եր	5207.5	4660.8	3763.4	2976.3	2225.5
ՋՕԸ-երի պետական ընթացիկ ֆինանսական աջակցությունը մեկ հեկտարի հաշվով, դրամ/հա	39.3	35.0	27.6	21.7	16.2

**) «Ախուրյան-Արաքս-ջրառ» ՓԲԸ/ «Սևան-Հրազդանյան-ջրառ» ՓԲԸ:*

***)* Պետական ընթացիկ ֆինանսական աջակցության (դրամաշնորհների) չափերը հաշվարկվել են հիմք ընդունելով ոռոգման կազմակերպությունների սակագների բարձրացումը

[3] Աղյուսակում ներկայացված ցուցանիշների համար հիմք է հանդիսացել Համաշխարհային բանկի և Խորհրդատուի միջև 2014 թվականի սեպտեմբերի 26-ին ստորագրված թիվ 7172862 պայմանագրի շրջանակներում իրականացված <<ՋՕԸ-երի և ոռոգում ջրառ ընկերությունների գործունեության և ՋՕԸ-երի պետական աջակցության միջնաժամկետ ռազմավարության կատարման արդյունքների վերլուծության>> ծախսերի կողմնորոշիչ կրճատման վերլուծությունը:

[4] Աղյուսակում ներառված չեն ջրառ կազմակերպությունների ֆինանսական և տեխնիկական ցուցանիշները

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2016 թ.
օգոստոսի 25-ի նիստի N 33
արձանագրային որոշման

1. Ոռոգման ոլորտի ֆինանսական կայունության բարելավման մարտավարության միջոցառումների ծրագիր

Միջոցառման անվանումը	Նպատակը, խնդիրը, ոլորտում իրականացվելիք միջոցառման նկարագիրը	Պատասխանատու կատարողները և համակատարողները	Ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը, ֆինանսական միջոցների չափը	Միջոցառման կատարման վերստուգելի չափանիշ	Ակնկալվող արդյունք
1	*2*	*3*	*4*	*5*	*6*	*7*
1.Ոռոգման համակարգի ընկերությունների կրեդիտորական պարտքերի վերակառուցման ծրագրի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն:	Ոլորտում կուտակված պարտքերի մեծ մասը ՋՕԸ-երի հիմնադրման ժամանակից են գոյացել, որոնց մի մասը ԱԱՀ-ի համար է, որը հանվել է 2011թ., իսկ ընթացիկ տարում տրամադրված սուբսիդիաների մի մասը ծախսվում է անցած տարիների պարտքը մարելու համար: Այս անցած	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ ֆինանսների նախարարություն, <<Ջրային տնտեսության>> ԾԻԳ	2016թ. հոկտեմբեր	ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ		Ապահովել ՋՕԸ-երի պարտքերից զերծ գործունեությունը սկսած 2017 թվականից

	տարիների պարտքը պետք է դուրս գրվի/մարվի/վճարվի: Ստեղծել նախապայմաններ հետագայում նմանատիպ երևույթներից խուսափելու համար:					
2.Բարձրացնել ոռոգման համակարգում տեղադրված SCADA ջրաչափական համակարգի օգտագործման արդյունավետությունը, դրա տեղեկատվական տվյալները համադրելով համակարգի ընկերությունների կողմից ներկայացված տվյալների հետ, ըստ անհրաժեշտության մշակել համակարգում ջրակորուստների կրճատման, ինչպես նաև աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպման միջոցառումների պլան:	Համաշխարհային բանկի աջակցությամբ ոռոգման համակարգերի ջրաբաշխման հանգուցային կետերում տեղադրվել է թվով 83 SCADA համակարգի ջրաչափեր, որը թույլ է տալիս օպերատիվ կերպով, այդ թվում նաև առցանց այդ համակարգերում ջրամատակարարման վերաբերյալ ստանալ տվյալներ:	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, <<Ջրային տնտեսության>> ԾԻԳ	2016թ. հոկտեմբեր			Վճարների հավաքագրման արդյունքում ջրի ճշգրիտ չափումների և ՋՕԸ-երիհասույթների ձևավորման ապահովում
3.Ոռոգման ոլորտի ակտիվների գույքագրում, յուրաքանչյուր ՋՕԸ-ի համար, կառավարման պլանի մշակում և ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների և ՋՕԸ-երի ծախսերի նվազեցման վերաբերյալ ՀՀ	Գույքի արդյունավետության բարձրացում: Ջրի կորուստները այժմ սահմանվում են յուրաքանչյուր ՋՕԸ-ի համար մոտ 40%, սակայն իրականում կորուստները ավելի բարձր են:	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ	2018-2021թթ.	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	գույքագրում և ռեգիստրի առկայություն	Ակտիվների պլանավորման զարգացման, ծախսերի կատարման արդյունավետության բարձրացման համար հիմքերի

կառավարության որոշումների նախագծերի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն:	Տեխնիկական աուդիտը, որի փորձնականը այժմ ընթացքում է, կարող է տեղեկատվություն տալ ջրային կորուստների վերագնահատման համար	տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե, ՀՀ պետական գույքի կառավարման վարչություն,				ստեղծում
4.Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների և ջրօգտագործողների ընկերությունների ամենամյա բյուջեով նախատեսված գումարի բաշխումը իրականացնել հիմնվելով ոռոգման սեզոնին հասանելի ջրային ռեսուրսների վերաբերյալ պատկան մարմինների կողմից հունվար-փետրվար ամիսների	Դրամաշնորհների տրամադրման օրենսդրական հիմքերի ապահովում	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ ֆինանսների նախարարություն	2017թ. սեպտեմբերի 30-ը	Ֆինանսավորում չի պահանջվում	Կառավարության կողմից ընդունված որոշման առկայություն	Դրամաշնորհների տրամադրման գործընթացի կանոնակարգում և վերահսկում

գնահատականների և կանխատեսումների հիման վրա: Ջրապահանջարկի և ջրառաջարկի գնահատման հիման վրա մշակել ընկերությունների բյուջեներում ներառվող 2018-2021թթ. ՋՕԸ-երին ընթացիկ դրամաշնորհների տեսքով պետական ֆինանսական աջակցության տրամադրման կողմնորոշիչ, ամենամյա չափաքանակները հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում և ներկայացում ՀՀ կառավարություն:						
5.Ոռոգման ջրի բնագավառում օրենսդրական բարեփոխումների պահանջների գնահատում և <<Ոռոգման ջրի բնագավառում մատուցվող ծառայությունների որակի բարելավման>> հայեցակարգի նախագծի մշակում, հաշվի առնելով. 1) Հազարամյակի մարտահրավերներ կորպորացիայի աջակցությամբ 2009թ.	Բնագավառում ներառված մարմինների իրավասությունների ու պարտականությունների հստակեցում և օրենսդրությամբ ամրագրում	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ	2017թ. դեկտեմբերի 10-ը	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ	օրենքի նախագծի առկայություն	Համակարգի առավել արդյունավետ շահագործում, ոռոգման ջրի ու ոռոգելի հողատարածքների առավել արդյունավետ/նպատակային օգտագործում, ֆինանսական կայունացում

մշակված <<Ոռոգման ոլորտի վերաբերյալ ՀՀ ազգային քաղաքականությունում>> բերված դրույթները, 2) ոռոգման սակագների համակարգի վերակառուցումը՝ ըստ ոռոգելի հողատարածքների հաստատագրված (միայն տվյալ տարում ՋՕԸ-ի հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքած և ծառայություններից օգտվող ջրօգտագործողների նկատմամբ) և օգտագործված ջրի դիմաց վճարների, 3) ՋՕԸ-երին նախատեսվող դերակատարություն ոռոգման հողերի առավել արդյունավետ օգտագործման խնդրում (մշակաբույսերի և հողատարածքների համադրություն, ըստ ջրման ռեժիմի և նորմայի ոռոգելի հողատեսքերի միավորում, ոռոգման ռեժիմի և նորմայի վերաբերյալ		բնապահպանության նախարարություն, ՀՀ ֆինանսների, նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, Խորհրդատու				(հավաքագրումների մակարդակի բարձրացում), ՋՕԸ-ջրօգտագործող հարաբերությունների կանոնակարգում

խորհրդատվություն), 4) գերնորմատիվային հողատարածքներում ոռոգման ջրի նորմաների վերանայում, 5) ընկերություններին լրացուցիչ եկամուտ ստանալու համար (օրինակ՝ ջրի երկրորդական վաճառքի, սարքավորումների կամ համակարգի վարձակալություն և այլն հարակից) օրենսդրական հիմքի ստեղծում, 6) ջրամատակարարման ճկուն, տարբերակված և խրախուսական համակարգի ներդրում, 7) տնտեսական առումով օրվա նախընտրելի ոռոգման ժամանակահատվածը (գիշերային ոռոգում՝ էլ.էներգիայի գիշերային սակագնով, գոլորշիացման ցածր մակարդակ):						

6.Երկու ոռոգում-ջրառ իրականացնող ընկերությունների միավորում մեկ ջրառ ընկերության մեջ:	Ոռոգում-ջրառ ընկերությունների վերակազմավորման նպատակն է բարձրացնել վերջիններիս ծախսերի կրճատման, ինչպես նաև ոռոգման համակարգին տրամադրվող պետական ֆինանսական աջակցության արդյունավետությունը:	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	2017թ.	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ		Ապահովել ոռոգման ավելի արդյունավետ ինստիտուցիոնալ կարգավորում
7. ՋՕԸ-երի վերամիավորման ուսումնասիրություն, ինչպես նաև ՋՕՄ-երի ստեղծում:	ՋՕԸ-երի գործունեության կայունացման բնագավառում ծառայությունների մատուցման արդյունավետության բարձրացման նպատակով առաջարկվում է ստեղծել ջրօգտագործողների ընկերությունների միություններ (ՋՕՄ)՝ հանրապետության ցածրադիր և նախալեռնային գոտիներում՝ ըստ այդ տարածքների ՋՕԸ-երը սնող մայր ջրանցքների, իսկ լեռնային գոտիներում՝ ըստ մարզերի վարչական	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն	2018թ. հունվարի 1	Ֆինանսավորում չի պահանջվում		Ապահովել ոռոգման ավելի արդյունավետ ինստիտուցիոնալ կարգավորում

	տարածքների					
8.Տարբեր դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող ներդրումային գործողությունների իրականացում, որոնք ուղղված են ոռոգման համակարգում շահագործման և պահպանման ծախսերի կրճատմանը:	Շահագործման և պահպանման ծախսերի կրճատմանը հանգեցնող հիմնական աշխատանքները մեխանիկական ջուրը ինքնահոսով փոխարինումն է	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե, ՀՀ գյուղատնտեսության նախարարություն, <<Ջրային տնտեսության>> ԾԻԳ	2016-2021թթ.	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ		Ապահովել շահագործման և պահպանման ծախսերի կրճատում
9. ՋՕԸ-երի բյուջեների կազմման մեթոդաբանության մշակում և հաստատում ՋՕԸ-երի կանոնակարգող խորհրդում:	Առավել իրատեսական բյուջեների կազմում	ՀՀ ԳՆ ջրային տնտեսության պետական կոմիտե	2018թ.	ՀՀ պետական բյուջե և ՀՀ օրենքով չարգելված այլ աղբյուրներ		Ֆինանսական և այլ միջոցների արդյունավետ օգտագործում